ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի նորագույն գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմնավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը: Ուսուցման մեթոդները, ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովելու ուսուցչի առջև դրված այս խնդիրները, ուստի ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և կարողանա դրանք ճիշտ կիրառել: Ուսուցման բազմաթիվ մեթոդների շարքում հետաքրքիր են միջառարկայական և ներառարկայական կապերը: Միջառարկայական կապերի տեսակներից է գրականություն և պատմություն կապը, որը նպաստում է պատմական նյութի խորքային իմացությանը, դասը դարձնում բովանդակալից և հետաքրքիր:

Հանգուցային բառեր և բառակապակցություններ. պատմականի և ներկայի համաժամանակյա քննություն, պատմական հիշողություն, պատմականի և գեղարվեստի խաչաձևում,պատմականի գեղարվեստական արժևորում:

Միջառարկայական կապը ուսուցման այն ձևն է, երբ զուգահեռներ են ստեղծվում երկու տարբեր առակաների միջև: Կարող են զուգահեռներ ստեղծվել հետևյալ մոտեցումներով՝ գրականություն-պատմություն, գրականություն-հոգեբանություն, գրականություն-փիլիսոփայություն, գրականություն-արվեստ և այլն: Գրականության դասավանդման ժամանակ, պայմանավորված ուսուցանվող նյութով, կարելի է ստեղծել տարբեր միջառարկայական կապեր:

Գրականություն – պատմություն միջառակայական կապ կարելի է ստեղծել հետևյալ նյութերի ուսուցման ժամանակ.

1.Պատմավեպերի ուսուցման ժամանակ

Յուրաքանչյուր պատմավեպի ուսուցման ժամանակ ուսուցիչը նախ պետք է աշակերտներին բացատրի պատմավեպի հիմքում ընկած պատմական ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական իրավիճակը, պատմական միջավայրի առանձնահատկությունները: Այնուհետև նշելով պատմական այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը, ուսուցիչը պետք է բացատրի, որ պատմավեպ գրելիս գրողը, ինչպես նշում է Մուրացանը, չպետք է դառնա պատմական փաստերի պատճենահանողը: Գրողը, հենվելով պատմիչների արձանագրած պատմական փաստերի վրա, պետք է ստեղծագործական երևակայության արդյունքում ստեղծի գեղարվեստական ստեղծագործություն, որտեղ կարող են առկա լինել սյուժետային այնպիսի դրվագներ, որոնք չկան պատմական վկայություններում: Պատմական հերոսները, թրծվելով գրողի ստեղծագործական երևակայության քուրայում, դառնում են գեղագիտորեն, հոգեբանորեն ավելի ընդգծուն գեղարվեստական կերպարներ: Պատմական փոքրիկ փաստը կարող է գրողի մոտ դառնալ առավել խորը պատկերային միջավայր, որտեղ հերոսների ներաշխարհը, հույզերը, հոգեբանական բարդ անցումները առավել խորությամբ են բացահայտում հերոսի մարդկային նկարագիրը, աշխարհայացքը, նրա արժեհամակարգը:

Ուսուցիչը պետք է աշակերտներին

բացատրի, որ գրական կերպարների ամբողջացման ճանապարհին մեծ ազդեցություն ունի պատմավեպ գրող հեղինակի ապրած ժամանակաշրջանը, այդ օրերի ազգային մտայնությունը և աշխարհընկալումը: Այսինքն՝ յուրաքանչյուր գրող, կրելով իր ժամանակաշրջանի մտածողության կնիքը, իր ապրած օրերի հասարակական-պատմական, քաղաքական իրադարձությունների ազդեցությունը, դրանով պայմանավորված ազգային խնդիրների ու արժեքների ներքին ազդակները, իր կերտած պատմական կերպարներին ինչ-որ չափով արդիական շունչ է տալիս, նրանց միջոցով ինչեցնում պատմական այդ ժամանակահատվածում կարևորագույն խնդիրները: Այդ է պատճառը, որ մեր բոլոր պատմավեպեր գրող հեղինակները, մտահոգված իրենց ժամանակաշրջանում առկա խնդիրներով, փորձել են պեղել ազգային պատմության այն էջերը, որոնք պատմական-քաղաքական ընդհանրություններ ունեն իրենց ապրած ժամանակաշրջանի հետ: Այս է պատճառը, որ ուսուցիչը պետք է աշակերտներին բացատրի ոչ միայն պատմավեպում պատկերված ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական խնդիրները, այլև դրան զուգահեռ ամբողջացնի տվյալ հեղինակի ապրած ժամանակաշրջանի պատմական նկարագիրը՝ ընդգծելով պատմական այդ երկու տարբեր ժամանակաշրջանների քաղաքական-հասարակական կյանքում առկա ընդհանրական խնդիրներն ու մտահոգությունները:

Պատմավեպի ուսուցման ժամանակ գրականություն-պատմություն միջառարկայական կապի այսպիսի կիրառությունից հետո պետք է ուսուցիչը անցնի նյութի բուն վերլուծությանը՝ շեշտադրելով վեպի գաղափարական հարցադրումները, կերպարակերտման առանձնահատկությունները, գրողի լեզվամտածողության ինքնատիպությունը:

2.Գրականություն-պատմություն միջառարկայական կապ կարելի է կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց սյուժետային գործողությունների հիմքում ընկած է որևէ պատմական փաստ կամ իրադարձություն: Այդպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ նախ ուսուցիչը պետք է խոսի պատմական այն իրադարձության մասին, որի շուրջը հյուսվում են սյուժետային դրվագները: Հետո նոր բացատրի գրողի՝ պատմականի և գեղարվեստականի միաձուլման արդյունքում ստացված պատկերային համակարգի, գաղափարական հարցադրումների, գեղագիտական խնդիրների մասին: Օրինակ՝ Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է նյութի բուն բացատրական աշխատանքը կատարելուց առաջ նախ աշակերտներին բացատրի պատմական այն գործողությունները, որոնք կազմում են գրական երկի հիմնական ատաղձը: Այսինքն՝ ուսուցիչը պետք է խոսի 20-րդ դարասկզբի պատմական-հասարակական-քաղաքական միջավայրի մասին, ցույց տա պատմական այդ ժամանակաշրջանում ստեղծված քաղաքական, սոցիալական այն իրավիճակը, որը հանգեցրեց ժողովրդի բուռն ընդվզմանը . աշխարհը ցնցվեց Հոկտեմբերյան հեղափոխության պոռթկումից: Հին հասարակարգից հոգնած, կեցության ներկա ծանր իրավիճակից դառնացած ժողովրդի գոյության մղձավանջային կենսակերպը լցրել էր մարդկային համբերության բաժակը: Սա մարդու՝ տարիների ընթացքում կուտակված այն ցասումն է, որը պոռթկում է այն պահին, երբ դաժան ներկան դառնում է անհանդուրժելի, և անարդարության, անօրինության, աղքատության մեջ խարխափող ժողովուրդը ընդվզում է, հոգու խորքից դուրս է հորդում անընդհատ խմորվող զայրույթը, որը նման է լեռան ընդերքում հասունացող հրաբուխի, որի ամենակուլ լավան բնաջնջում է շրջապատում ամեն ինչ: 20-րդ դարասկիզբին սոցիալական-քաղաքական-հասարակա-

կան ծանր իրավիճակը ժողովրդական տարբեր շերտերի խմորումների և տարաձայնությունների պատճառ էր դարձել: Գոյության անհանդուրժելի իրավիճակը ներկայի դառը զգացողություններից հագեցած ժողովրդին դարձրել էր ամենազոր մի ուժ՝ խելագար ամբոխ, որը կարող էր անհնարինն անել, աշխարհը վայրիվերո փոխել. «եթե ուզեր արեգակներ կշպրտեր երկինքն ի վեր, եթե ուզեր վայր կբերեր երկինքներից արեգակներ»:

Ուսուցիչը պատմական ժամանակաշրջանի մեկնողական- գնահատողական աշխատանք կատարելուց հետո միայն պետք է բացատրի պոեմի գաղափարական հարցադրումները, պոեմում տեղ գտած խորհրդանիշների ենթաշերտերը, չարենցյան պատկերակերտման արվեստի ուժը:

3. Գրականություն – պատմություն միջառարկայական կապը պետք է կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց գրական երկունքը կրում է այդ օրերի, պատմական այդ ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական-գաղափարական մտայնության և դրանով պայմանավորված առկա դժվարությունների կնիքը: Օրինակ՝ Չարենցի, Բակունցի, Մահարու և այն հեղինակների, ովքեր ապրեցին և ստեղծագործեցին «Անհատի պաշտամունքի» տարիներին, ստեղծագործությունների վրա մեծ է ժամանակաշրջանի պատմական մտայնության, հասարակական-քաղաքական գաղափարախոսության ազդեցությունը: Ուստի նրանց ստեղծագործությունների արժևորումը պետք է կատարել նրանց ապրած ժամանակաշրջանի պատմական-հասարակական գնահատումների հիման վրա: Ուսուցիչը գեղարվեստական երկը պետք է վերլուծի ժողովրդի պատմական անցյալի և ներկայի հարաբերության հենքի վրա: Օրինակ՝ Բակունցի՝ կորած հայրենիքի թեմայով գրված պատմվածքների ուսուցման ժամանակ բակունցյան պատմվածքներում արծարծված գաղափարական հարցադրումները հասկանալու համար նախ ուսուցիչը պետք է 20- րդ դարասկզբի մեր մեծ ողբերգության՝ Մեծ եղեռնի պատմական գնահատականը տա: Այնուհետև ուսուցիչը պետք է բացատրի 20-րդ դարի 20-30-ական թթ. Խորհրդային երկրում իշխող գաղափարական հարկադիր մոտեցումներն ու գնահատումները: Բացատրելով «Անհատի պաշտամունքի» էությունը՝ ուսուցիչը պետք է նշի, որ պատմական այդ բարդ ու դժվարին ժամանակաշրջանում, երբ իշխում էին ստալինյան բռնատիրության դաժան օրենքները, վտանգված էին ազգային մտածողությունն ու ազգային արժեքները: Պատմական այդ ժամանակաշրջանում արգելված թեմաների շարքում էր նաև դարասկզբի ողբերգության թեման, իսկ դա նշանակում էր պատմական հիշողության կորուստ: Իսկ այն ազգը, որը չունի պատմական հիշողություն, չի կարող իր ապագան կերտել՝ պահելով ազգային հոգեբանությունն ու ազգային նկարագիրը: Այս էր պատճառը, որ 20-30-ականների գրական սերունդը,որը մոտ էր կանգնած պատմական ողբերգական իրադարձություններին, լռելու իրավունք չուներ: Այս գիտակցումով նորագույն արձակում Բակունցը առաջինը ստեղծագործական խիզախումով անդրադարձավ արևմտահայության ճակատագրին՝ հիմնելով այս թեմայի կենսարար ակունքը, որը հետագայում պետք է հարստանար իր տաղանդավոր հետնորդների ստեղծագործություններում: Ընդգծելով արևմտահայության ճակատագրի թեմայի, դարասկզբի Մեծ եղեռնի և դրանով պայմանավորված մեր պատմական հիշողության մեկդարյա ծիրը՝ ուսուցիչը պետք է բացատրի պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ թեմայի հնչեղության առանձնահատկությունները՝ պայմանավորված տվյալ պատմական ժամանակաշրջանում իշխող քաղաքական-հասարակական մտայնությամբ:

Բացատրական-վերլուծական նման աշխատանք կատարելուց հետո միայն ուսուցիչը պետք է անցնի ուսուցանվող

նյութի գաղափարական հարցադրումների բացահայտմանը:

4.Գրականություն-պատմություն միջառարկայական կապը կարելի է կիրառել նաև կենսագրական նյութի ուսուցման ժամանակ:

Այս կապի կիրառումը հատկապես անհրաժեշտ է այն հեղինակների կենսագրության ուսուցման ժամանակ, ովքեր ապրել են պատմական այնպիսի ժամանակաշրջանում, որը հարուստ է պատմական կարևորագույն իրադարձություններով, բեկումնային իրողություններով, որոնք խորը հետք են թողել տվյալ գրողի աշխարհայացքի, մտածողության, արժեհամակարգի վրա: Այսինքն՝ նրա ստեղծագործությունների վրա խորապես ազդել է պատմական միջավայրը և պատմական ժամանակաշրջանը, որից էլ սնուցվել է նրա ստեղծագործական միտքը:

Յուրաքանչյուր գրողի կերպարակերտման ատաղձը հիմնականում պատմական այն միջավայրն է, որում ապրում է ինքը, և բնական է, որ նրա հերոսները ծնվում են այդ միջավայրից, երբեմն էլ իրական մարդիկ դառնում են որևէ գրական հերոսի նախատիպ, կամ ինքը հեղինակն է դառնում տվյալ կերպարի նախատիպը: Հաճախ են լինում դեպքեր, որ հեղինակը տվյալ գրական կերպարի մեջ դնում է իր ներաշխարհը, իր մարդկային տեսակը, իր աշխարհընկալումը:

Այս կապի կիրառումը կնպաստի հատկապես հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունների (հատկապես բանաստեղծությունների) առավել խորքային ընկալմանը: Օրինակ՝ աշակերտը երբեք չի հասկանա Թումանյանի հայրենասիրական քնարի արժեքը, չի զգա այնտեղից հորդացող անհուն ցավն ու տառապանքը, եթե նա կենսագրական նյութի ուսուցման ժամանակ ծանոթացած չլիներ հեղինակի ապրած ժամանակների Հայաստան աշխարհի ողբերգական իրավիճակին: Ն. Զարյանի «Երկու հանձարեղ գլուխ» բանաստեղծության վերլուծության ժամանակ աշակերտը կընկալի բանաստեղծության ենթաշերտերում զետեղված գաղափարական հարցադրումները, եթե կենսագրական նյութի ուսուցման ժամանակ ուսուցիչը նրանց բացատրած լիներ Զարյանի մտածողության մեջ կատարված որակական փոփոխությունների մասին՝ պայմանավորված ստալինյան բռնատիրության կաղապարված օրենքներով, պատմական տարբեր ժամանակաշրջաններում իշխող մտայնությամբ:

5. Գրականություն-պատմություն միջառարկայական կապը կարելի է կիրառել ինքնակենսագրական նյութի ուսուցման ժամանակ:

Սովորաբար ինքնակենսագրական վեպ գրել են այն հեղինակները, ովքեր զգացել են, որ իրենց անցած ճանապարհը ինչ-որ չափով դառնում է իր սերնդի ապրած պատմական ժամանակաշրջանի ընդհանրական նկարագիր: Այսինքն՝ նրանք շատ լավ գիտակցել են, որ իրենց կյանքի պատմությունը հետագա սերունդների համար դառնալու է պատմական այդ ժամանակաշրջանի ճանաչողության և արժևորման հնարավորություն: Այս է պատճառը, որ ինքնակենսագրական վեպերի ուսուցման ժամանակ ուսուցիչը նախ պետք է գրականություն- պատմություն միջառարկայական կապի օգնությամբ համադրի տվյալ հեղինակի ապրած ժամանակահատվածի պատմական իրողությունները և ինքնակենսագրական վեպում պատկերված պատմական երևույթների նկարագիրը: Ինքնակեսագրական վեպերում հիմնականում հեղինակը հարազատ է մնում պատմական երևույթներին և պատմական փաստերին (երբեմն լինում են խիստ անհատական մոտեցումներ). այս դեպքում ինքնակենսագրական վեպը ինչ-որ տեղ ձեռք է բերում պատմական սկզբնաղբյուրի արժեք: Այս է պատճառը, որ ուսուցիչը մինչ վեպի արժևորմանը անցնելը նախ պետք է ներկայացնի պատմական այն ժամանակաշրջանը, որում ապրել է տվյալ հեղինակը, և այդ ժամանակաշրջանում տեղի ունեցող

պատմական կարևորագույն իրադարձությունները, որոնց մասին նկարագրություններ կան վեպում: Օրինակ՝ Գուրգեն Մահարու ինքնակենսագրական վեպերի ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է անպայման կիրառի գրականություն-պատմություն միջառարկայական կապ:

Միջառարկայական կապերի նման հետաքրքիր մոտեցումները հնարավորություն կտան դասը դարձնելու առավել արդյունավետ և բովնդակալից: Միջառարկայական կապերի օգնությամբ աշակերտները ճիշտ կընկալեն գեղարվեստական երկում պատմականի և գեղարվեստականի հեղինակային ինքնատիպ խաչաձևումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները. ձեռնարկ ուսուցիչների համար, «Այրեքս» 2004թ.:
2. Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան (մեթոդական ձեռնարկ) Եր. 2004թ.:

INTERDISCIPLINARY LINKS, LITERATURE AND HISTORY

ARMENUHI ARZUMANYAN

Associate Professor of the Chair of the Armenian Modern Literature, Yerevan State University, PHD in Philological Sciences

Professional grounding of the teacher, his attainments of modern methods of education and his skills of their usage promotes the index of student's training as well as helps the student in formation of good outlook and getting positive qualities.Different manners and methods of education give the teacher possibility to fix up his goals. That is why the teacher must be well-informed of the new methods of education and must put them into practice perfectly.There are interesting links between object-lessons among different methods of education.

One of the varieties of interdisciplinary links is literature and history. This way of education contributes to deep study of historical issues, helps to make lesson interesting effective.

МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ, ЛИТЕРАТУРА И ИСТОРИЯ

АРЗУМАНЯН АРМЕНУИ

Доцент кафедры новейшей армянской литературы Ереванского государственного университета, кандидат филологических наук.

Профессиональная подготовка учителя, его знания современных методов обучения и навыков их применения способствуют не только показателю образованности ученика, но и помогают формированию в нем здравого мышления и приобретению им положительных качеств. Различные способы и методы обучения дают возможность учителю обеспечить поставленные перед собой задачи. Поэтому учитель должен быть хорошо осведомлен о современных методах обучения и должен уметь правильно их применять. Среди ряда различных методов обучения интересны межпредметные и внутрипредметные связи.

Одной из разновидностей межпредметной связи является литература и история. Этот способ обучения содействует глубокому изучению исторического материала, делает урок интересным и содержательным.